ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ Ն194-Ա
«05» հոկտեմբեր 2022Թ

ՀԱՄԼԵՏ ՕՀԱՆՅԱՆԻՆ «ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԽՆՁՈՐՈՒՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՄՈՆԻԿԱ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ կետով, 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Հանրակրթության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ և 12-րդ հոդվածի 1-ին մասերով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 3-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգը հաստատելու մասին» թիվ 319-Ն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզի «Զառիթափի միջնակարգ դպրոց», «ՀՀ Վայոց ձորի մարզի Խնձորուտի միջնակարգ դպրոց», «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Գոմքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ների կոլեգիալ կառավարման միացյալ խորհրդի նախագահի 2022 թվականի հոկտեմբերի 3-ի /մտից Մ-7472-2022/ գրությամբ ներկայացրած փաթեթը և Համլետ Օհանյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2022 թվականի հոկտեմբերի 6-ից Համլետ Օհանյանին նշանակել «ՀՀ Վայոց ձորի մարզի Խնձորուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն, նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր 5 /հինգ/ տարի ժամկետով:
2. 2022 թվականի հոկտեմբերի 6-ից Մոնիկա Ստեփանյանին ազատել «ՀՀ Վայոց ձորի մարզի Խնձորուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունների կատարումից:
3. «ՀՀ Վայոց ձորի մարզի Խնձորուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

4. Հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել հաստատության նյութական պատասխանատու անձանց:

10/5/2022

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550 Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ք. Եղեգնաձոր

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2022թ հոկտեմբերի 05-ի
N 194-Ա որոշման

«ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԽՆՁՈՐՈՒՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ՈՒՄ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

Հանձնաժողովի նախագահ՝

Ավագ Գաբրիելյան	ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ

Անդամներ՝

Նարինե Մաղաքյան	ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ
Աննա Սաֆարյան	ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր տնտեսագետ